

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱԿՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 01.12.2014. դրությամբ

ՀՀ Արագածոտնի մարզում գործում են 22 բժշկական կազմակերպություններ, որոնցից 5-ը մարզպետարանի ենթակայության են, 17-ը համայնքային: Մարզի առողջապահական բնագավառում աշխատում են 207 բժիշկներ և 577 բուժքույրեր:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժօգնության 2014թ. գլոբալ բյուջեն կազմում 1490541000 դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով 911703000 դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 578837000 դրամ: 2014 թվականի 11 ամսվա դրությամբ մարզի բուժօգնության կատարողականը կազմում է մոտ 1349565000 դրամ: Գլոբալ բյուջեյի հաշվարկով 10 ամիսների դրությամբ 100%-ով ստացվել է կատարողականի գումարը:

2014թ. ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 282144, որից 96338 0-18 տարեկանների, տնային կանչերի թիվը 12572, որից 0-18 տարեկանների 8699, տնային ծնունդները 0:

2014թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի ամբուլատոր-պոլիկլինիկ բուժօգնություններում գրանցվել և համապատասխան բուժում են ստացել՝ 167 պարբերական հիվանդներ, 1173 չարորակ նորագոյացություններով հիվանդներ, 1568 հոգեկան հիվանդներ, 341 էպիլեպսիայով հիվանդներ, 14 ոչ շաքարային դիաբետով հիվանդներ, 3018 շաքարային դիաբետով հիվանդներ՝ որից 574 ինսուլինակախյալ, 2444 ոչ ինսուլինակախյալ:

2014թ. 11 ամիսների ընթացքում, սահմանված ժամկետներում մարզի բուժօգնություններին է բաշխվել ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնված 30547361.70 հազար դրամի և հումանիտար ճանապարհով ստացված 21071080.33 հազար դրամի դեղորայք:

Հիվանդանոցային բուժօգնությունը մարզի տարածքում կատարվում է 4 բժշկական և 2 առողջության կենտրոններում: Ստացիոնար բուժօգնություն և սպասարկում ստացել են 5062 հիվանդներ, որոնցից 4401 ընդգրկվել են պետական պատվերի շրջանակներ: Գրանցվել է շտապ օգնության 9863 կանչ: Ծնունդները 2014թ. նոյեմբերի 30-ի դրությամբ 988:

Համաձայն ՀՀ ԱՆ 13.03.2014թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կենտրոնական հանձնաժողովի կողմից ուղեգրվող հիվանդների սահմանված չափաքանակը հաստատելու մասին» թիվ 482-Ա հրամանի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ նախապատրաստվել և մարզպետի հաստատման են ներկայացվել 26 միջնորդագրերի նախագծեր՝ մարզի սոցիալապես ծանր պայմաններում գտնվող անձանց Երևանի կլինիկաներում պետական շրջանակներում անհրաժեշտ բժշկական հետազոտությունների և բուժօգնություն ստանալու համար, մարզի բուժօգնություն բուժօգնություն ստանալու համար տրվել են 27 ուղեգրեր:

Մարզի սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող 10 անձանց ուղարկվել են „Արզնիի առողջարան,, 10՝ „Ջերմուկի առողջարան,, 28՝ Աղվերկանի „Գանձաղբյուր,, և 9՝ „Վանաձորի ԱՍԱԲ՝ առողջարաններ, տրվել է ընդամենը 57 ուղեգիր:

18 12 20/14

Չորակոչային և նախագորակոչային աշխատանքները մարզում իրականացնում են երեք տարածաշրջանային բժշկական հանձնաժողովները, որոնք ապահովված են համապատասխան վերապատրաստում անցած բժշկական կադրերով, իսկ բուժփմնարկները անհրաժեշտ սարքավորումներով:

2014թ. ամառային և ձմեռային զորակոչերին վարչությունը ներկայացրել է զորակոչային բժշկական հանձնաժողովների կազմը և կազմակերպել է հանձնաժողովի կողմից հայտնաբերված հիվանդ պատանիների բուժօգնությունը մարզի բուժփմնարկներում: Ամառային զորակոչից տարկետում ստացած հիվանդ պատանիների բուժօգնությունը մարզի բուժփմնարկներում կազմակերպելու համար տրվել են հանձնարարականներ:

«Արագածոտնի մարզի բժշկական կենտրոններում 2014թ. կազմակերպվել են Բաց դռների օրեր Երևանի «Նատալի Ֆարմ» ՍՊԸ «Մալաթիա» ԲԿ մասնագետների կողմից: Կատարված բժշկախորհրդատվական ընդունելության ընթացքում սպասարկվել է 354 մարդ:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ «Մալաթիա» ԲԿ-ի և Արագածոտնի մարզպետարան կողմից կնքվել է հուշագիր, համաձայն որի 2014 թվականի հոկտեմբերի 30-ին Արագածոտնի մարզպետարանում կազմակերպվել է կոնֆերանս «Բժշկության արդի խնդիրներ» թեմայով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ «Մալաթիա» ԲԿ-ի բժիշկների կողմից մարզի ԲԿ-ների և ԱԱՊՕ-ների բժիշկների համար:

Համաձայն ՀՀ ԱՆ 24.02.2014թ. «Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ կանանց առողջության պահպանման միամսյակ կազմակերպելու մասին» թիվ 330-Ա հրամանը Երևանի «Թիվ 2 Բուժմիավորում» ԲԿ ՓԲԸ կողմից ՀՀ Արագածոտնի մարզի բժշկական կազմակերպություններում կազմակերպվել են անվճար բժշկական խորհրդատվություններ:

2014 թվականի ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվել են մարզի բժշկական կազմակերպություններում հաշվառված բոլոր հղիները:

Մարզի բոլոր հիվանդանոցներն պարբերաբար ձեռք են բերել և մշտապես ապահովված են եղել անտիբյուրդինով, հակափայտացման, հակաբոտուլինային շիճուկներով, հակակատաղության վակցինայով և հակափայտացման անատոքսինով:

ՀՀ Առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից, ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ և Վորլդ Վիժն-ի հետ համագործակցությամբ մարզի Թալինի և Ապարանի տարածքներում իրականացվում է «Երեխայի առողջության և սնուցման բարելավման» համապարփակ ծրագիր: Կազմակերպության կողմից իրականացվում են դասընթացներ ապագա մայրերի, բարձր դասարանի աշակերտուհիների և հղիների, ինչպես նաև մայրերի ուսուցման համար, ստեղծվել են մայրերին աջակցող խմբեր, մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում համայնքային կտրվածքով դասընթացների միջոցով, դասընթացներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի կանխարգելում և „Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ», թեմաներով: 2014 թվականին մարզի ամբուլատորիաներում UMCOR Հայաստան հասարակական կազմակերպության կողմից շարունակվելու է իրականացվել սեռավարակների ախտորոշում և բուժում, տուբերկուլոզով հիվանդների և նրանց հետ շփում ունեցող անձանց խորհրդատվություն, լաբորատոր հետազոտություններ, ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն թեմաներով սեմինարներ:

“Աննա և Արմենակ Թադեոսյանների անվամբ բուժարանի” տնօրենի և Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության դեսպանի նախաձեռնությամբ ՀՀ Արագածոտնի մարզի 18 բժշկական կազմակերպություններին հատկացվել է “Բրեսթլայթ” կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման սարք և կազմակերպվել է դասընթաց՝ օգտագործման կարգի մասին:

“Վերջին օրերի սրբեր” բարեգործական կազմակերպության կողմից “Աշտարակի բժշկական կենտրոն” ՓԲԸ-ին հատկացվել է բժշկական սարքավորումներ 4 միլիոն դրամ արժեքով՝ էլեկտրական դանակ, վիրահատարանի լույս, արտածծիչ, կարդիոնոնիտոր 2 հատ:

UNICEF կազմակերպության կողմից “Ծաղկահովիտի բժշկական կենտրոն” ՓԲԸ-ում կատարել է մեկ սենյակի վերանորոգում մայրերի ուսուցման դասընթացներ կազմակերպելու համար: “Երեխաների առողջ և ճիշտ սնուցում” ծրագրի շրջանակներում հատկացվել է նորածնային ճառագայթային տաքացուցիչ և ֆոտոթերապիայի սարք:

“Վերջին օրերի սրբեր” բարեգործական կազմակերպության կողմից “Ուշիի ԱԱՊԿ” ՓԲԸ-ին հատկացվել է բիոքիմիական անալիզատոր 2.5 միլիոն դրամ արժեքով:

World Vision կազմակերպության և Արտենիի համայնքապետարանի համատեղ աջակցությամբ “Արտենիի առողջության կենտրոն” ՓԲԸ-ի տարածքը ցանկապատվել է: World Vision կազմակերպությունը հատկացել է 500000 դրամ: UNICEF կազմակերպության կողմից “Արտենիի առողջության կենտրոն” ՓԲԸ-ում կատարել է մեկ սենյակի վերանորոգում մայրերի ուսուցման դասընթացներ կազմակերպելու համար:

World Vision կազմակերպության Ապարանի և Թալինի տարածքի բժշկական ամբուլատորիաներում իրականացնում է մեկ սենյակի վերանորոգում մայրերի ուսուցման դասընթացներ կազմակերպելու համար:

ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության կողմից ՀՀ ԱՆ տրամադրված «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագիրը նպատակաուղղված է բարելավելու շտապ բուժօգնության ծառայությունները՝ ՇՕ ռեսուրսների պլանավորման և կառավարման, մշտադիտարկման համակարգի ներդրման, հանրային իրազեկվածության բարձրացման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատանքներ: «Աջակցություն շտապ օգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՇՕ տեղեկատվական-վերլուծական համակարգի գործարկման համար տրամադրվել են համակարգիչներ՝ Աշտարակի, Թալինի, Ապարանի, Ծաղկահովիտի, Արագածավանի, Ներքին Բազմաբերդի, Արագածի շտապ օգնության ծառայություններին, իսկ Արուճի, Ագարակի, Կարբիի և Մաստարայի շտապ օգնության ծառայություններին պլանշետներ: Աշտարակի, Ներքին Բազմաբերդի, Ապարանի, Թալինի, Արագածավանի և Ծաղկահովիտի բժշկական կազմակերպություններին տրամադրվել են հոսանքի անխափան սնուցման սարքեր: Կազմակերպվել են շտապօգնության տեղեկատվական վերլուծական համակարգի գործարկման շուրջ վերապատրաստման դասընթացներ՝ 2014 թվականի մայիսի 29-30 ՇՕ բժիշկների, բուժակների, դիսպետչերների և կանչը ընդունող բուժքույրերի, ընտանեկան բժիշկների օպերատորներ, ՇՕ ադմինիստրատիվ անձնակազմի, ՇՕ պատասխանատուների՝ գլխավոր բժիշկների, հաշվապահների, ստատիստների և ավագ բուժքույրերի համար:

2014թ. օգոստոս-սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի համար կազմակերպվել են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» N5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում «Ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վարման» և «Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման և վարման» թեմաներով դասընթացներ:

«Վերլուծ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից 2014 թվականի մայիսի 13-14 և 20-21 կազմակերպվել են երկօրյա դասընթացներ հղիության և ծննդաբերության վարման նոր չափորոշիչների ու քարտերի լրացման վերաբերյալ:

Համաձայն ՀՀ ԱՆ 2014 թվականի մայիսի 13-ի N1014-Ա՝ «Հայաստանի Հանրապետությունում նախազորակոչիկների և զորակոչիկների շրջանում կանխարգելիչ

պատվաստումների վերաբերյալ խորհրդակցությունների և դասընթացների կազմակերպման և իրականացման մասին» հրամանի 2014 թվականի մայիսի 12-30-ը և օգոստոսի 11-15-ը կազմակերպվել են գործնական դասընթացներ:

Համաձայն ՀՀ ԱՆ 2014 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտում սեպտեմբերի 4-5-ը մահվան մասին բժշկական վկայականի և մահվան կտրոնի ձևանմուշների լրացման կարգի վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու մասին» թիվ 2088-Ա հրամանի դասընթացին մասնակցել է Աշտարակի ԲԿ պոլիկլինիկ ծառայության մեկ բժիշկ:

„Նատալի Ֆարմ,, ՍՊԸ „Մալաթիա,, ԲԿ Առիթմոլոգիական Սրտաբական կենտրոնի կողմից 2014 թվականի հուլիսի 18-19 կազմակերպվող սեմինարին ՀՀ Արագածոտնի մարզի բժշկական կազմակերպություններից մասնակիցել են 5 սրտաբաններ:

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ան կողմից 2014 թվականի հունիսի 27-ին իրականացվել է սեմինար-խորհրդակցություն նվիրված Հիվանդությունների միջազգային դասակարգչի (ՀԴ-10) կիրառմանը Հայաստանի Հանրապետությունում:

“Արաբկիր” ԲԸ-ԵԴԱԻ, Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից 2014 թվականի մայիսի 13-14-ը Մանկաբուժական թոքաբանության առանձին հարցերին նվիրված դասախոսություններին մասնակցել են 7 մանկաբույժներ:

Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միությունը՝ Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է «Ֆարմա Արմենիա 2014» Դեղագործության մրցունակության 6-րդ միջազգային համաժողովը, 2014 թվականի սեպտեմբերի 14-ին՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում որին մասնակցել են մարզի բժիշկներ և դեղագետներ:

Մանկաբուժական ասոցիացիայի կողմից կազմակերպվող 2014թ. 24-25 հոկտեմբերին Հայաստանի մանկական բժիշկների 4-րդ կոնֆերանսին մասնակցել են մարզի մանկաբույժները:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման համար 2014թ. ձեռնարկվել են միջոցառումներ, որոնք ուղղված էին պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցմանը, մայրական մահերի բացառմանը, երկրորդ մակարդակի հիվանդանոցային ծառայությունների որակի ցուցանիշների բարելավմանը, որի արդյունքում նվազել են հիվանդանոցային մահաբերությունը, հիվանդի բուժման միջին տևողությունը, նկատվել է վիրահատական ակտիվության բարձրացում, որի հետ միաժամանակ արձանագրվել է հետվիրահատական բարդությունների նվազեցում:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ



Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ